

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ՆԱԶԱՐՅԱՆ ՀԱՅԿ ԶԱՎԵՆԻ

### ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՄՆ-Ի ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ

Ժ. 01.06 -«Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության

## Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

**Գիտական ղեկավար՝**

բանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր

**ԵՐԻՑՅԱՆ ՍԵՐՊՈ ՍԱՐԳՍԻ**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

բանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր

**ԱԼՈՅԱՆ ԼԵՆԴՐՈՒՇ ԱՐԱՄԻ**

բանասիրական գիտությունների թեկնածու  
**ՍԱՅԱԴՅԱՆ ԼԻԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏԻ**

**Առաջատար կազմակերպություն՝**

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2012թ. հունիսի 6-ին՝ 14<sup>00</sup>-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՀ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ Երևան, Աբովյան 52<sup>ա</sup>, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012թ. մայիսի 4-ին:

**Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար՝  
բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր**

**Ա. Ա. ՍԱԿԱՐՅԱՆ**

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ատենախոսությունը նվիրված է Ամերիկայի Միացյալ Նահանգների էլեկտրոնային լրատվամիջոցների կողմից Իրանի Իսլամական Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի լուսաբանմանը, դրա առանձնահատկությունների ներկայացմանը: Երկար տարիներ է, ինչ կողմերի միջև ձևավորվել են հակասություններ, իրարամերժ սկզբունքներ, որոնք իրենց արտացոլումն են գտնում տեղեկատվական ոլորտում: Այսօր Միացյալ Նահանգների խոշոր լրատվամիջոցները<sup>1</sup> հաճախ են անդրադառնում Իրանում տեղի ունեցող անցուդարձերին և դրանց տալիս սեփական մեկնաբանությունը: Հեղինակություն ունեցող հեռուստաընկերությունները, էլեկտրոնային մամուլը ողողված են ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների կողմից Իրանին հասցեագրված մեղադրանքների, նախազգուշացումների կամ պատժամիջոցների կիրառման մասին քննարկումներով, ինչպես նաև ԻԻՀ-ի ղեկավարության կողմից ԱՄՆ-ի, նրա համախոհների հասցեին հնչող սպառնալիքների մասին տեղեկատվությամբ: Կողմերի միջև հակամարտության թեման վերածվել է միջազգային հանրության ուշադրության կենտրոնում գտնվող խնդրի, որտեղ յուրաքանչյուրը փորձում է միջազգային հանրությանը ներկայացնել իր սեփական տեսակետները, սկզբունքները, արդարացիությունը:

Վերջին տարիներին ուշադրության կենտրոնում են հայտնվել էլեկտրոնային լրատվության միջոցները (պարբերականների կայք-էջեր, հեռուստառադիոընկերություններ և նրանց կայք-էջեր, սոցցանցեր և այլն): Դրանք Միացյալ Նահանգների միջազգային հանրության աչքերում Իրանի կերպարը սեփական տեսանկյունից ներկայացնելու գործում մեծ հնարավորություն են ընձեռել:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Իրանի վարկանիշը աղավաղելու, դրան բացասական երանգներ հաղորդելու նպատակով Միացյալ Նահանգների մի շարք հայտնի ՋԼՄ-ներ հստակ կողմնորոշում են դրսևորում (թեմաների ընտրության, շեշտադրումների, օրակարգի ձևակերպման (agenda setting) հարցերում և այլն): Բանն այն է, որ բարձրակարգ լրատվամիջոցները, ունենալով ֆինանսական լայն հնարավորություններ և մեծ լսարան, կարողանում են իրենց խոսքը լսելի դարձնել աշխարհի տարբեր անկյուններում, իսկ մյուս լրատվամիջոցները քիչ թե շատ ընդօրինակում են նրանց գործելակերպը, սկզբունքները, կառուցվածքը: Իհարկե, Իրանում գոյություն ունեն խնդիրներ, որոնք իրանական հասարակության մեջ դժգոհություններ և տարածայնություններ են առաջացնում, հետևաբար կարիք ունեն շտկման: Սակայն այս թերացումները հաճախ ներկայացվում են բացասական տեսանկյունից և մատուցվում լսարանին:

---

<sup>1</sup> Տե՛ս Նյու Յորք Թայմս ([www.nytimes.com](http://www.nytimes.com)), Լուս Անջելես Թայմս ([www.latimes.com](http://www.latimes.com)), Վաշինգտոն Փոստ ([www.washingtonpost.com](http://www.washingtonpost.com)), Սի-Էն-Էն ([www.cnn.com](http://www.cnn.com)) և այլն:

ԱՄՆ-ի էլեկտրոնային լրատվամիջոցներում մեծ տեղ է տրվում քարոզչությանը, որի պարբերական կրկնության պայմաններում համապատասխան առասպելներ և կարծրատիպեր են ձևավորվում:

### **ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Գրեթե ամեն օր արևմտյան աղբյուրներից տեղեկություններ են ստացվում Իրանի հասարակական-քաղաքական անցուղարձերի վերաբերյալ: Իրանի հետ կապված խնդիրները վերջին տարիներին ամենաշատ քննարկվողներից են: Թեման արդիական է այնքանով, որ մշտապես գտնվում է լրագրողների, քաղաքագետների, տարբեր ոլորտների մասնագետների ուշադրության կենտրոնում: Միաժամանակ, ուսումնասիրվող թեման աչքի է ընկնում իրարամերժ տեսակետներով, ուստի նրա ուսումնասիրումը պահանջում է պատշաճ ուշադրություն, բազմակողմանի վերլուծում:

### **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ**

Մեր հետազոտությունների գործնական նշանակությունը պայմանավորված է ատենախոսության մեջ ներկայացված նյութերի, հիմնահարցերի կարևորությամբ: Այն հարուստ տվյալներ է պարունակում իրադարձությունների պատմական զարգացման, կիրառվող մեթոդների, մարտավարության, դրանց առանձնահատկությունների վերաբերյալ: Թեմայի ուսումնասիրումը կարևորվում է հատկապես այն հանգամանքով, որ ԻԻՀ-ը Հայաստանի Հանրապետության ամփոփական հարևան, բարեկամ պետություն է, և նրա հետ կատարվող ցանկացած իրադարձություն կարող է որոշակի ազդեցություն ունենալ մեր հասարակության վրա: Այդ իսկ պատճառով խնդրի բազմակողմանի ուսումնասիրումը և գիտակցումը կարող է նպաստել ճշգրիտ կարծիքի ձևավորմանը, քանի որ Իրանը՝ որպես Հայաստանի գործընկեր, թերևս միակ հարևան պետությունն է, որի հետ ՀՀ-ը չունի հակամարտության ակտիվ եզրեր: Միաժամանակ, Իրանում կայունության հաստատումը և անրապնդումը բխում է Հայաստանի շահերից:

### **ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ**

Ուսումնասիրության առարկան Իրանի հասարակական-քաղաքական անցուղարձերի լուսաբանման առանձնահատկությունների ներկայացումն է: Ուշադրության կենտրոնում են հատկապես «Նյու Յորք Թայմսի», «Լոս Անջելես Թայմսի», «Վաշինգտոն Փոստի», «Սի-Էն-Էնի» և այլ լրատվամիջոցների էլեկտրոնային կայքերի, ինչպես նաև իրանական լրատվական կայք-էջերի նյութերի հետազոտությունը: Ատենախոսության նպատակն ու խնդիրները հետևյալներն են.

- ներկայացնել հասարակական կարծիքի ձևավորման գործում ԱՄՆ-ի էլեկտրոնային ՁԼՄ-ների դերն ու նշանակությունը, բնութագրել այդ լրատվամիջոցների որդեգրած սկզբունքները, մեթոդները, մարտավարությունը,
- ներկայացնել իրանական և ամերիկյան իրարամերժ տեղեկատվության, խնդիրների ձևավորման պատճառները, տեղեկատվական հակամարտության դրսևորման ձևերը,
- ուսումնասիրել ԱՄՆ-ի զանգվածային լրատվամիջոցներում Իրանի հասարակական-քաղաքական կյանքին առնչվող նյութերը, առաջ քաշած խնդիրները, դասակարգել դրանց առանձնահատկությունները, շեշտադրումները,
- մշակել ԱՄՆ-ի ՁԼՄ-ների՝ ԻԻՅ-ի միջազգային վարկանիշի ներկայացմանն ուղղված լուսաբանման ընդհանուր օրինաչափությունները,
- տալ պատասխան այն հարցին, թե ամերիկյան հայտնի լրատվամիջոցներն ինչ նպատակով և մեթոդներով են իրականացնում հակաիրանական քարոզչություն, ինչպիսի գործառույթներ, ժանրեր են կիրառում այդ գործընթացում,
- առաջարկել մեր հանրապետության լրատվամիջոցների համար նպատակահարմար տեսակետներ:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅՈՐ**

Մեզ հայտնի գրականության մեջ նմանատիպ ծավալով ուսումնասիրություն չի կատարվել: Իհարկե, կան բազմաթիվ արժեքավոր նյութեր, շատ հեղինակներ անդրադարձել են թեմային առնչվող խնդիրներին, սակայն մեզանում առաջին անգամ է նման ծավալով գիտաքննորեն ներկայացվում մշակած լրատվամիջոցների կողմից Իրանի հասարակական-քաղաքական կյանքի լուսաբանման առանձնահատկությունները: Օգտվելով տարբեր լեզուներով գրականությունից (հայերեն, անգլերեն, պարսկերեն, ռուսերեն)՝ փորձել ենք հնարավորության սահմաններում օբյեկտիվորեն և բազմակողմնի ներկայացնել աշխատանքը: Անհրաժեշտ է մշել, որ վերոհիշյալ թեման դիմամիկ է և անընդհատ իրավիճակի փոփոխություններ է դրսևորում, ուստի, ատենախոսության դրույթներն այդ գործընթացին զուգահեռ են ներկայացվում, որոնք էլ իրենց հերթին պարունակում են որոշակի ուղույթ:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔ**

Ատենախոսության մեթոդաբանական հիմք են կազմել գիտական հետազոտության մեթոդաբանական սկզբունքներն ու եղանակները: Կիրառվել են դիտարկման, համադրման, քննադատական, պատմահամեմատական, համակարգային, տեսական մոդելավորման, ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդները: Նշված մեթոդաբանության կիրառումը պայմանավորված է մեր առջև դրված խնդիրների գիտականորեն և խորաթափանց հետազոտմամբ: Մասնավորապես, պատմահամեմա-

տական մեթոդի կիրառմամբ ներկայացրել ենք նախկինում եղած համանման դեպքերը, և այդ հիմքի վրա վերլուծել մեր ատենախոսության հիմնախնդիրների համապատասխան դրույթները: Ինդուկտիվ մեթոդը օգտագործել ենք առանձին դեպքերը ուսումնասիրելու և ընդհանուր եզրահանգումներ կատարելու համար:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրակացությունները հրապարակվել են գիտական պարբերականներում, ժողովածուներում, գիտաժողովներում, այդ թվում՝ «Բանբեր Երևանի համալսարանի», Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի 4-րդ գիտաժողովի, «Իրանի իսլամական հեղափոխությունը համեմատական կոնտեքստում» միջազգային գիտաժողովի զեկույցներում և հանդեսներում: Աշխատանքը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ-ի Ժուռնալիստիկայի ֆակուլտետի ռադիոհեռուստատեսային Ժուռնալիստիկայի ամբիոնում:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, համապատասխան ենթագլուխներ պարունակող երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

## **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Ներածության մեջ ներկայացվում են թեմայի ընդհանուր բնութագիրը, արդիականությունը, հետազոտության խնդիրներն ու նպատակները, գիտական նորույթը: Տվել ենք նաև գլուխների ընդհանուր նկարագրությունը:

## **ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ**

### **ՁԼՍ-ՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՉԵՎԱԿՈՐՈՒՄԸ**

Առաջին գլուխը՝ «ՁԼՍ-ների հրապարակումները և հասարակական կարծիքի ձևավորումը», բաղկացած է 2 ենթագլուխներից: Առաջին ենթագլխում խոսում ենք պետության իմիջի ձևավորման գործում զանգվածային լրատվամիջոցների դերի և նշանակության մասին:

Ամերիկյան շատ լրատվամիջոցներ մեծ ուշադրություն են դարձնում այնպիսի լրատվության տարածմանը, որը թույլ է տալիս ավելի արդյունավետ գործել հասարակական կարծիք ձևավորելիս: Դեռևս 20-րդ դարի 30-ական թթ. «Նյու Յորք

Թայմսի» հոդվածների մեծ մասը պատրաստվում էին այնպիսի նյութերով, որոնք մշակված էին իմիջ-մասնագետների կողմից<sup>2</sup>: Նրանց դերը մեծ էր պետության, տարբեր կազմակերպությունների, պաշտոնյաների և նախագահների իմիջը ստեղծելու գործում: Ոլորտի մասնագետները նշում են, որ ձևավորված իմիջն է ամնիջապես որոշում վարքագիծը, այլ ոչ թե ճշմարտությունը: «Մենք գործում ենք այնպես, ինչպես աշխարհն է ներկայանում մեր առջև, այլ ոչ թե այնպես, ինչպես այն գոյություն ունի»<sup>3</sup>: Իմիջի ստեղծումը դառնում է հնարավոր, քանի որ բացակայում է առերես շփումը, իսկ էլեկտրոնային ՁԼՄ-ների առկա հնարավորությունների պարագայում կերպարի ստեղծման խնդիրը դառնում է արդիական ուսումնասիրության համար:

Մեր հետազոտությունները ցույց են տալիս, որ Միացյալ Նահանգների որոշ հայտնի լրատվամիջոցներ ակտիվորեն ներգրավված են «անցանկալի» պետությունների, դրանց ղեկավարների իմիջի աղավաղման գործընթացում: Օրինակ, «Նյու Յորք Թայմսը», «Լոս Անջելես Թայմսը», «Վաշինգտոն Փոստը», «Սի-Էն-Էնը» 2009թ. Իրանի նախագահական ընտրություններից հետո իրենց հրապարակումների միջոցով շրջանառության մեջ դրեցին ընտրությունների կեղծված լիճեղու տեսակետը, և դրանում մեղավոր ճանաչեցին գործող իշխանություններին՝ փորձելով միջազգային հանրության շարքերում ցածրացնել նրանց վարկանիշը: Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին Միացյալ Նահանգների լրատվամիջոցների կողմից ակտիվ քայլեր են ձեռնարկվում Իրանի Իսլամական Հանրապետությանը «չարիքի առանցքի», «ահաբեկչական պետության», «միջուկային սպառնալիքի», «ԱՄՆ-ի թիվ 1 թշնամու» իմիջները վերագրելու ուղղությամբ: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ հետազոտել ենք ՁԼՄ-ների դերն ու նշանակությունը պետության իմիջի, հասարակական կարծիք ձևավորելու գործում՝ բերելով Իրանի և ԱՄՆ-ի օրինակները:

Մեր ուշադրությունը սևեռել ենք համացանցին և հեռուստատեսությանը, քանի որ այսօր դրանք հանրության գիտակցության մեջ պետության այս կամ այն ոլորտի մասին հիմնական կերպար ստեղծողներն են: Արբանյակի միջոցով տեղեկատվությունը վայրկյանների ընթացքում կարող է սփռվել երկրագնդով մեկ, իսկ նոր մեդիան իր սոցիալական ցանցերով, բլոգներով արդեն հասցրել է աչքի ընկնել ժողովրդական շարժումների ժամանակ այլընտրանքային լրատվության բնագավառում: Հեռուստատեսության և համացանցի գործունեության միջոցով է, որ նախկինում տարիներ շարունակ Արևմուտքի կողմից ընդունված Լիբիայի նախագահ Մ. Քադաֆին հանկարծ սկսեց կրել ահաբեկչի կամ ցեղասպան ղեկավարի կերպարը և սպանվեց իր երկրի քաղաքացիների կողմից: Փաստորեն, սա ասվածի վառ ասպցույցն է առ այն, որ լսարանի վրա ներգործած ազդեցությունն առավելապես կախված է ՁԼՄ-ներից և նրանց միջոցով ստեղծված իմիջից:

<sup>2</sup> Տե՛ս **Почепцов Г.**, Профессия: имиджмейкер, М.: Алетея, 2001, с. 6-7.

<sup>3</sup> **Boulding K.**, National images and international systems, The Journal of Conflict Resolution, www.jstor.org, Vol.3, No. 2, Jun., 1959, pp. 120-131.

Երկրորդ ենթագլխում անդրադառնում ենք ՁԼՍ-ների կողմից կիրառվող ազդեցության այնպիսի միջոցների, որոնք ձևավորում են հասարակական կարծիք: Քարոզչությունը, ապատեղեկատվությունը հզոր գենք են դարձել մեծ պետությունների ձեռքում: Յուրաքանչյուր պետություն ձգտում է հնարավորինս պաշտպանել սեփական տեղեկատվական անվտանգությունը, քայլեր ձեռնարկել վերահսկելու հակառակորդի տեղեկատվական դաշտը, նպատակահարմար ձևով ուղղորդել հասցեատերերի գործողությունները: Պատմությունը վկայում է, որ լայնածավալ տեղեկատվական գործողությունները կարող են հեղափոխել պետություններ, իրականացնել աշխարհաքաղաքական փոփոխություններ:

Այս ենթավերնագրում անդրադառնում ենք աշխարհաքաղաքական տեղեկատվական հակամարտություններին: Այդ գործընթացում բավականին ազդեցիկ են ԱՄՆ-ի, նրա դաշնակից երկրների լրատվամիջոցները: Նրանց համատեղ և միևնույն բնույթի տեղեկատվության պայմաններում աշխարհաքաղաքական տեղեկատվական պատերազմների արդյունավետությունը կրոնապետական վարչակարգի հանդեպ բացասական մթնոլորտ ստեղծելու գործում ավելի ընդգծված է դառնում: Օրինակ, հակաիրանական տրամադրվածությունն ավելի համոզիչ դարձնելու համար միևնույն տեղեկատվությունը ներկայացնում են ոչ միայն ԱՄՆ-ի, այլև համախոհ երկրների հեղինակություն ունեցող ՁԼՍ-ները: Ստեղծվում է այնպիսի տպավորություն, թե բոլորը խոսում են տվյալ թեմայի շուրջ: Դրանց պարբերական շրջանառման պայմաններում ժամանակի ընթացքում այն դառնում է սովորական և ամրապնդվում է մարդկանց գիտակցության մեջ:

Կարևորել ենք նաև ժամրերի ուսումնասիրումը: Ժամրային ոլորտը մեդիա տեքստի բովանդակային վերլուծության համար էական գործիք է<sup>4</sup>: ԱՄՆ-ի հայտնի լրատվական կայք-էջերում ([www.nytimes.com](http://www.nytimes.com), [www.washingtonpost.com](http://www.washingtonpost.com), [www.latimes.com](http://www.latimes.com) և այլն) վերլուծական ժամրերին մեծ տեղ է հատկացվում: Հայտնի է, որ այդ ժամրերով նյութեր պատրաստելը մեծ փորձառություն և լրագրողական հմտություններ է պահանջում: Հետևաբար, երբ նշված աղբյուրներում հանդիպում ենք վերլուծությունների, մեկնաբանությունների, կարող ենք խոսել դրանց հեղինակների արհեստավարժ լինելու մասին: Սակայն նշենք, որ վերլուծական ժամրերում սուբյեկտիվ գործոնն ավելի ընդգծված է: Շատ բան կարող է որոշել հենց տվյալ լրագրողի կողմնորոշվածությունը:

Խոսելով ՁԼՍ-ների հրապարակումների և դրանց թողած ազդեցության մասին՝ կարող ենք նշել, որ պետության իմիջի ձևավորումը, արդյունավետ քարոզչությունը, ապատեղեկատվության տարածումը մեծապես կիրառվում են ամերիկյան լրատվամիջոցներում:

---

<sup>4</sup> Տե՛ս **McQuail D., Windhal S.**, Communication Models for the Study of Mass Communication. 2nd Edition. Longman, NY 1993. pp. 146-147.



## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ՀԱՄԱՑԱՆՑԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ (ԱՄՆ-Ի ԵՎ ԻԻՀ-Ի ՕՐԻՆԱԿՈՎ)

Նորագույն հաղորդակցական միջոցների կիրառումը մատչելի է դարձրել լուրերի հասանելիությունը: Ներկայումս տպագիր մամուլին, հեռուստառադիոհաղորդումներին մարդիկ հետևում են համացանցով: Եթե տարիներ առաջ աշխարհի տարբեր ծայրերում բնակվող մարդկանց համար հնարավոր չէր գնել և ընթերցել «Նյու Յորք Թայմս» օրաթերթը, ապա այսօր համացանցի շնորհիվ այն հասանելի է բոլորին և ամենուր:

Ամերիկյան լրագրության մեջ կարևոր ձեռքբերում էր համացանցի հնարավորությունների և դրանց միջոցով լրատվամիջոցների ու լրագրության մեջ նորամուծությունների ներդրումը: Նախորդ դարի 90-ական թթ. նոր տեխնոլոգիաներ մտցվեցին ԱՄՆ-ի լրագրության մեջ: Համացանցում հայտնվեցին ամենօրյա թերթերի էջերը: 1996թ. նախագահական ընտրություններում ընդգծվեց լրագրության նոր ուղղություն՝ «հայեցակարգային լրագրությունը»<sup>5</sup>: Այն ենթադրում էր քաղաքական, ընտրական գործընթացների լուսաբանման հարցում տեղեկատվականից վերլուծականին անցում: Սակայն, մասնագետները գտնում են, որ նման դեպքում հավանական է դառնում իրականության ոչ օբյեկտիվ, խեղաթյուրված լուսաբանումը: Փորձը ցույց է տալիս, որ հետագայում այս հայեցակարգը կիրառվեց Միացյալ Նահանգների շատ լրատվամիջոցներում:

2008թ. մարտ ամսին տեղի ունեցած իրադարձությունները մեր հանրապետությունում, 2008թ. օգոստոսին տեղի ունեցած կովկասյան հնգօրյա պատերազմը, 2009թ. նախագահական ընտրություններն Իրանում, հեղափոխությունների ալիքն արաբական աշխարհում նորագույն տեխնոլոգիաների կիրառման, նոր մեդիայի ազդեցության դրսևորման վառ օրինակներ են: Հեռուստատեսության, ռադիոյի, թերթերի և ամսագրերի փոխարեն մարդիկ սկսեցին ուշադրություն դարձնել սոցիալական ցանցերում, բլոգներում եղած տեղեկատվությանը: Մասնավորապես, արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության ձեռքբերման հարցում բլոգները աննախադեպ նշանակություն ունեցան: 2008թ. մարտ ամսին ՀՀ-ում հայտարարված արտակարգ իրավիճակի պայմաններում, երբ արգելված էր շատ լրատվամիջոցների գործունեությունը, բլոգները վերածվեցին այլընտրանքային լրատվության միջոցի, իսկ 2009թ. ամռան ամիսներին Թեհրանի փողոցներում կատարվածի մասին հաղորդագրություններ և տեսանյութեր տարածվեցին հիմնականում «Թվիթթերի», «Յութուբի» և բլոգների միջոցով:

Նոր մեդիայի միջոցով Իրանի հասարակական-քաղաքական կյանքի անցում դարձերի վերաբերյալ տարածվեցին տեղեկություններ, որոնք չափազանցված

<sup>5</sup> Տե՛ս **Ворошилов В.**, Журналистика, 5-е издание, С. П., изд. Михайлова В., 2004, с. 92.

էին կամ չէին համապատասխանում իրականությանը, և նույնիսկ որոշ գործողություններ հրահրված էին դրսից (ցույցերի ակտիվ շրջանում լուսաբանվեց «Թվիթթերի» հաշիվների մի նշանավոր ցուցակ, որտեղ «Թվիթթերի» ակտիվ մասնակիցներից մեկը, ով հակակառավարական կոչերով էր հանդես գալիս, եղել է Սիացյալ Նահանգներից, մյուսը՝ Թուրքիայից, իսկ երրորդը, ով կոչ էր անում ժողովրդին դուրս գալ փողոցներ, եղել է Շվեյցարիայից<sup>6</sup>), սակայն դրանք վերածվեցին միջազգային հանրության կողմից շրջանառվող տեղեկատվության: Իրանի հակառակորդ պետությունները, որոնք աջակցություն էին ցուցաբերում երկրի ապակայունացմանը, լուրջ հաջողություններ չգրանցեցին, ինչը նաև թեհրանի տեղեկատվական մարտավարության (համացանցի, բջջային կապի թուլացում, խիստ գրաքննության առկայություն, օտարերկրյա լրագրողների գործունեության սահմանափակում և այլն) արդյունքն էր:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### ԻՐԱՆԻ ՀԱՍՏՈՒՄԱԿԱՆ - ԶԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄՆ ԱՄՆ-Ի ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ

Վերջին գլուխը բաղկացած է 4 ենթագլուխներից: Առաջին ենթագլխում անդրադառնում ենք Իրանի իսլամական հեղափոխությանը: Այս ենթավերնագրի ներկայացումը կարևորվում է նրանով, որ մատնանշում է կողմերի միջև ներկայիս լարվածության հիմքերը: Հեղափոխության արդյունքում Իրանը որդեգրեց «երրորդ ուղու» գաղափարախոսությունը (ո՛չ Արևելքին, ո՛չ Արևմուտքին, այլ՝ իսլամին<sup>7</sup>), սկսեց վարել երկրի շահերից բխող քաղաքականություն, վերահսկել երկրի բնական պաշարները: Հիշարժան է ֆրանսիական «Մոնո դիպլոմատիկ» թերթում լույս տեսած Իրանում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ տողերը. «Իրանական ժողովրդի ապստամբությունը մի ամբողջ ազգի բողոքի արտահայտություն է սոցիալական և տնտեսական զարգացման այն մոդելին, որը նրա վզին է փաթաթվել դրսից: Իրանցիները մերժում են արևմտյան կապիտալիզմը»<sup>8</sup>: Հոդվածի այս տողերը միանգամայն արտացոլում են այն դրությունը, որը տիրում էր հեղափոխության տարիներին: ԱՄՆ-ը կորցրեց իրանական բնական պաշարների վերահսկողությունը, և արդեն մի քանի տասնամյակ է, ինչ իր դաշնակիցների հետ փորձում է վերականգնել նախկին դիրքերը երկիրը «ներսից քանդելու» (տեղեկատվական ճնշումների և տնտեսական պատժամիջոցների կիրառմամբ) մարտավարությամբ:

<sup>6</sup> Տե՛ս Leverett F., Leverett H. Mann, *How US Media Botched Iran's Election // Independent Investigative Journalism Since 1995*, <http://consortiumnews.com/2010/061610d.html>, 17.06.2010.

<sup>7</sup> А гаев С., *Иран в прошлом и настоящем*, М.: изд. Наука, 1981, с. 220.

<sup>8</sup> Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Եր., Ձանգակ-97, 2006, էջ 706:

Երկրորդ ենթագլուխը իրանաամերիկյան տեղեկատվական պատերազմների մասին է: Գրեթե ամեն օր մենք կողմերի միջև հակամարտության տարբեր դրսևորումների ականատեսն ենք: Առանձնացրել ենք ԻԻՀ-ԱՄՆ տեղեկատվական պատերազմների դրսևորման մի քանի բնագավառներ՝ Իրանի արտաքին և ներքին քաղաքականության, հասարակական կյանքի խնդիրների լուսաբանումը ԱՄՆ-ի էլեկտրոնային ՁԼՄ-ներում, դրանց արձագանքը կրոնապետական վարչակարգի կողմից, տեղեկատվական պատերազմներն Իրանի միջուկային, ռազմական, հաղորդակցության ոլորտի շուրջ և այլն: Հիշարժան է տեղեկատվական պատերազմների մի վառ օրինակ. «Սի-Էն-Էնը» Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի խոսքերը՝ «Իրանը իրավունք ունի ատոմային խաղաղ ծրագիր մշակելու», թարգմանել և որպես ապատեղեկատվություն տարածել էր «Իրանը իրավունք ունի ստեղծելու ատոմային զենք» ձևով<sup>9</sup>: Ուստի, կարևորում ենք Իրանի հանդեպ լարվածության գիտակցումը, գործընթացի մանրամասների ուսումնասիրումը:

Ընդհանուր առմամբ, առանձնացնել ենք իրանաամերիկյան տեղեկատվական պատերազմների մի քանի կարևոր շրջան.

- մինչհեղափոխական շրջան (մինչև 1978թ.), երբ կողմերը թշնամական չէին տրամադրված միմյանց նկատմամբ,
- հեղափոխությունից մինչև 2001թ., երբ թե՛ ամերիկյան, թե՛ իրանական լրատվամիջոցները, որոշակի զգոնություն պահպանելով, քննադատում էին միմյանց,
- 2001 թվից հետո ընկած ժամանակահատված, երբ սրվեցին հակասությունները և օրեցօր շարունակում են վատթարանալ: Այս շրջանում կարող ենք առանձնացնել վերջին տարիների տեղեկատվական պատերազմների մի կարևոր ենթափուլ, երբ ուշադրության կենտրոնում հայտնվեցին էլեկտրոնային լրատվամիջոցները և նոր մեդիան:

2001թ. հետո ԱՄՆ-ի ՁԼՄ-ների կողմից բուռն գրոհների ենթարկվեցին իսլամադավան մի շարք երկրներ, այդ թվում՝ Իրանը: Վերջինս մեղադրվեց ահաբեկչական գործունեություն ծավալելու մեջ: Հետաքրքրական է, որ արևմտյան ՁԼՄ-ները և կառավարությունները չկարողացան հաստատել, որ Իրանը աջակցել է միջազգային ահաբեկչությանը: Այնուամենայնիվ, նման մեղադրանքների առկայությունն արդեն դարձավ տեղեկատվական պատերազմների խորացման և թեհրանի դեմ ճնշումներ գործադրելու պատճառ: Իսլամական Հանրապետությունը ոչ միայն ժխտեց իր հասցեին ուղղված մեղադրանքները, այլև ինքը մեղադրեց ԱՄՆ-ի որոշ ուժերին ահաբեկչական վարքագիծ դրսևորելու մեջ<sup>10</sup>:

<sup>9</sup> Տե՛ս **Панарин И.**, Информационная война против Ирана, <http://panarin.com/comment/237/>, 18.01.2006.

<sup>10</sup> Տե՛ս **MacFarquhar N.**, US Walks Out As Iran Leader Speaks // New York Times, [www.nytimes.com/2010/09/24/world/24nations.html](http://www.nytimes.com/2010/09/24/world/24nations.html), 23.09.2010.

Համաձայն «Էյ-Բի-Սի Նյուզի» (ABC NEWS) տեղեկությունների՝ դեռևս ԱՄՆ-ի նախկին նախագահ Ջ. Բուշ Կրտսերի նախագահության տարիներին հաստատվել էր մի ծրագիր, որը ենթադրում էր տեղեկատվական արագացված արշավ Իրանի դեմ: Վաշինգտոնի նպատակն էր ԻԻՀ-ի վարչակազմի փոփոխումը և ամերիկամետ իշխանության հաստատումը նախկին իրանական թագավորական վտարանդիներով<sup>11</sup>: Իրան-ԱՄՆ հարաբերությունների մասին «Թայմս» ամսագրին տված հարցազրույցում Թեհրանի համալսարանի քաղաքագետ Ս. Ջիբաքալամը նշում է. «ԱՄՆ-ը փորձում է խեղաթուրման ենթարկել Իրանին և օգտագործել ընդդիմադիրների քննադատությունները երկրի ներսում՝ աջակցելով նրանց: Միացյալ Նահանգները փորձում է թավշյաե հեղափոխություն անել Իրանում, որը նա իրականացրեց Ուկրաինայում և որոշ հետխորհրդային երկրներում»<sup>12</sup>: Հիրավի, ԱՄՆ-ի էլեկտրոնային լրատվամիջոցների պարբերական ուսումնասիրումը ցույց է տալիս, որ Վաշինգտոնը քայլեր է ձեռնարկում («փափուկ» ուժի կիրառմամբ, մարդկանց մեջ անվստահության, վախի մթնոլորտ ստեղծելով) երկրի ներսում անցուդարձերին ցանկալի ընթացք տալու ուղղությամբ:

Տեղեկատվական հակամարտության ոլորտում տանուլ չտալու համար Իրանի իշխանությունները քայլեր են ձեռնարկում նոր ռադիո և հեռուստաալիքներ ստեղծելու ուղղությամբ, որոնք հեռարձակվում են անգլերեն և արաբերեն: Միաժամանակ ջանում են օգտագործել իրանական սփյուռքի հնարավորությունները: Իրանը կիրառում է հետևյալ սկզբունքը. «ԻԻՀ-ի ՁԼՄ-ներում թուլատրված է խոսքի ազատությունը, գաղափարների և մտքերի տարածումը այնքանով, որքանով պահպանված են իսլամական նորմերը և երկրի շահերը»<sup>13</sup>: Ուստի, ԻԻՀ-ի տարածքում ՁԼՄ-ների խիստ գրաքննություն է գործում, որի միջոցով իրանցիների համար արևմտյան տեղեկատվական հոսքերը անհասանելի են դառնում:

Ամփոփելով Իրան-ԱՄՆ տեղեկատվական պատերազմների թեման՝ փաստենք, որ մի քանի ոլորտներ (Իրանի ներքաղաքական, արտաքին քաղաքական, հասարակական, ռազմական և այլն) ԱՄՆ-ի էլեկտրոնային լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում են: Հատկանշական է, որ քիչ են այնպիսի թեմաների վերաբերյալ հրապարակումները, ինչպիսիք են Իրանի մշակութային, գիտական, կրթական ոլորտները: Ստացվում է, որ նշված լրատվամիջոցներն Իրանի հասարակական-քաղաքական կյանքի մասին կարևոր խոսք ունեն ասելու, իսկ մշակութային ոլորտում քննադատվում է ոչ թե այս կամ այն հիմնախնդիրը, այլ իշխանությունների՝ այդ հարցերում ունեցած սխալ դիրքորոշումը:

Համացանցի և էլեկտրոնային լրատվամիջոցների հնարավորությունների կիրառմամբ ԱՄՆ-ի վարած տեղեկատվական պատերազմը համակարգված բնույթ

<sup>11</sup> Տե՛ս **Margolis Er.**, Seeing Through All the Propaganda About Iran // Eric Margolis Archives, [www.lewrockwell.com/margolis/margolis152.html](http://www.lewrockwell.com/margolis/margolis152.html), 23.06.2009.

<sup>12</sup> **Daraghi B.**, If Obama Gambit Works, Tehran's Hard-Liners Would Suffer // Los Angeles Times, <http://www.latimes.com/news/nationworld/world/la-fg-iran-analyst-qa7-2009apr07.0,110563.story>, 07.04.2009.

<sup>13</sup> ԻԻՀ սահմանադրություն, գլուխ 12, հոդված 175:

ունի: Դրա նպատակն է իրանցիների մեջ վախի, թերաթեքության զգացում սերմանելը, իշխանությունների հանդեպ անվստահությունն ձևավորելը, իսկ միջազգային հանրության մեջ՝ Իրանի հանդեպ բացասական մթնոլորտ ստեղծելը: Իրանի դեմ ռազմական գործողություններ նախաձեռնելու պարագայում այսպիսի մթնոլորտը օգտակար կլինի, միջազգային հանրությունը այդքան խիստ չի քննադատի ԱՄՆ-ին, քանի որ այդ ամենը կբացատրվի որպես «ԱՄՆ-ի բարի կամքի դրսևորում», որը պայքարում է «չար իշխանությունների դեմ»: Սա է այն կարևոր առաքելություններից մեկը, որը կատարում են ԱՄՆ-ի մի շարք լրատվամիջոցներ:

ԱՄՆ-ի էլեկտրոնային լրատվամիջոցներում («Նյու Յորք Թայմսի», «Լոս Անջելես Թայմսի», «Վաշինգտոն Փոստի» կայք-էջեր, «Սի-Էն-Էն» և այլն) տեղ գտած նյութերը, որոնք հիմնականում վերլուծություններ, կարծիքներ և մեկնաբանություններ են, գործում են միևնույն սկզբունքների շրջանակներում, լուսաբանում են գերազանցապես Իրանի շուրջ ծավալվող բացասական երևույթները և հրապարակվում են մի քանի լրագրողների կողմից: Հավաքել են հանդիպում նյութեր, որոնք ներկայացնում են Իրանի, նրա իշխանությունների հետ կապված ձեռքբերումները, դրական երևույթները: Նշված լրատվամիջոցներում կիրառվող մեթոդներից են ամբողջության մեջ մասնավոր դեպքերի կարևորումը, իրականության մասնակի լուսաբանումը, իրադարձությունների հիմնական դրույթների շրջանցումը և այլն: Այս մեթոդների կիրառումը հնարավոր է դարձնում ըստ սեփական հայեցողության ներկայացնել տեղեկատվությունը: Ամերիկյան էլեկտրոնային աղբյուրներում կարելի է հանդիպել նաև ծայրահեղ դիրքորոշումների: «Stopirannow.com»<sup>14</sup> կայքը և դրանում տեղ գտած հակաիրանական հայտարարությունները խոսքերիս վառ ապացույցն են:

Իրանի հասարակական-քաղաքական կյանքի լուսաբանումն ամերիկյան ԶԼՄ-ներում մեծ թափ ստացավ 2009թ. հունիսին՝ նախագահական ընտրությունների օրերին: Ամերիկյան լրատվամիջոցները ուղիղ ազդեցություն ունեցան այդ շարժումների վերելքի վրա՝ ակտիվ լուսաբանելով յուրաքանչյուր քայլ: Ստեղծվեց այնպիսի տպավորություն, որ Իրանը կանգնած է քաղաքացիական պատերազմի շեմին, և կարող է հեղափոխություն տեղի ունենալ: Նման մթնոլորտ ստեղծելու համար անընդմեջ լուսաբանվեցին առավելապես ընդդիմադիր կողմի տեսակետներ. հարցազրույցները վերցվեցին ընդդիմադիր առաջնորդներից, տեսանյութերը նկարահանված էին հակաիշխանական լրատվամիջոցների կողմից և այլն: Թեև մեր կողմից ուսումնասիրված նյութերում չենք հանդիպում կոնկրետ փաստերի և ապացույցների, այնուամենայնիվ Իրանում ընտրությունների «կեղծված լինելու փաստը» և «ընտրությունների արդյունքները պետք է որ խարդախության հետևանքով եղած լինեն»<sup>15</sup> տեսակետը ակտիվորեն շրջանառվեց:

<sup>14</sup> Տե՛ս [www.stopirannow.com](http://www.stopirannow.com)

<sup>15</sup> **Leverett F., Leverett Mann H.**, How US Media Botched Iran's Election // Independent Investigative Journalism Since 1995, <http://consortiumnews.com/2010/061610d.html>, 17.06.2010.

«Լոս Անջելես Թայմսը» իր հոդվածում առաջ է քաշում ընտրությունների մասին մի քանի վարկածներ, թե արդյոք նախագահական ընտրությունները կեղծված էին, արդյոք Ահմադինեժադը կարողացել է հաղթանակել 2/1 հարաբերակցությամբ: Հոդվածի հեղինակ Մաթյու Ղասսը նախ քննադատում է հոգևորականներին, թե ինչու պետք է հարյուրավոր նախագահության թեկնածուների հայտեր չընդունվեն Պահապանների Խորհրդի մի քանի հոգևորականների կողմից, որի արդյունքում միայն նրանց կողմից հավանության արժանացած 4 թեկնածուներ այդ իրավունքը ձեռք բերեցին: Այնուհետև, անդրադառնալով ընտրությունների արդյունքներին՝ նշում է. «Դժվար է հավատալ այն մտքին, որ վիճահարույց նախագահ Մահմուդ Ահմադինեժադը կարող էր ստանալ իրանցիների ձայների 63%-ը, որը գրեթե 2 անգամ գերազանցում է իր հիմնական հակառակորդ Միր-Հոսսեին Մուսավիի հավաքած ձայներին»<sup>16</sup>:

Հոդվածի հեղինակը կասկածելի է համարում, որ ԻԻՀ-ի հոգևոր առաջնորդը, բացահայտ աջակցելով Մ. Ահմադինեժադին, հեռուստատեսությամբ հայտարարեց վերջինիս հաղթանակի մասին քվորումի ավարտից հետո, այնինչ, ինչպես հայտնում է Մերձավոր Արևելքի գծով մասնագետ ժուլան Քոլը, «ընտրահանձնաժողովը պետք է սպասեր երեք օր արդյունքները հաստատելու համար»<sup>17</sup>: Իսկ «Բի-Բի-Սիի» Իրանի գծով վերլուծաբանը զարմանք է հայտնում, թե ինչպես պատահեց, որ թյուրքական ծագում ունեցող Մուսավիին պարտվեց Ահմադինեժադին Մուսավիի ծննդավայր Ատրպատականում, որտեղ ապրում են գերազանցապես թյուրքական ծագում ունեցող քաղաքացիներ:

Նախ նշենք, որ Պահապանների Խորհուրդը, ըստ երկրի սահմանադրության, իրավասու է նախագահության թեկնածուներին թույլ տալ կամ չտալ դնելու իրենց թեկնածությունը: Բացի այդ, Պահապանների Խորհուրդը չէր կարող հազարավոր թեկնածուների ապահովել ընտրություններին մասնակցելու հնարավորություն: Ինչ վերաբերվում է այն հարցին, որ Մուսավիի նկատմամբ գործող նախագահը հաղթանակել է 2/1 հարաբերակցությամբ, «Միջազգային հասարակական կարծիք» հետաքննական լրագրողական ընկերությունը ներկայացնում է Իրանում կատարված հարցումների արդյունքները<sup>18</sup>, որտեղ Մ. Ահմադինեժադը միանձնյա առաջատար է:

«Լոս Անջելես Թայմսի» առաջ քաշած մյուս վարկածը «անարդար» ընտրությունների մասին Ատրպատականում թյուրքական ծագում ունեցող ընտրազանգվածի վերաբերյալ էր, որոնք նախընտրել էին իրենց ձայները տալ Ահմադինեժադին (ծագումով Ֆարս նահանգից), այլ ոչ թե Մուսավիին (ծագումով Ատրպա-

---

<sup>16</sup> Տե՛ս **Duss M., Rubin M.**, Sham in Iran. Was the Iran presidential election truly fraudulent, or is there any way incumbent Mahmoud Ahmadinejad could have won by a 2-1 margin // Los Angeles Times, [http://www.latimes.com/news/opinion/opinionla/la-oev-duss-rubin17-2009jun17.0.6825136\\_story](http://www.latimes.com/news/opinion/opinionla/la-oev-duss-rubin17-2009jun17.0.6825136_story), 17.06.2009.

<sup>17</sup> Նույն տեղում

<sup>18</sup> Տե՛ս **Kull S., Ramsay C., Weber S., Lewis E.**, An Analysis of Multiple Polls of the Iranian Public // <http://www.worldpublicopinion.org/pipa/articles/bmiddleeastnfricara/652.php>, 03.02.2010.

տականից): Խնդիրն այն է, որ իշխանական վերին օղակներում մեծ թիվ են կազմում թյուրքախոս իրանցիները, այդուհանդերձ դա ամենևին չի նշանակում, որ ոչ թյուրքախոսները զիջում են իրենց ազդեցության լծակներով: Բացի այդ՝ Ահմադինեժադի ունեցած ծայերի առավելությունը բացատրվում է նրանով, որ երկրի գերագույն առաջնորդը՝ այսօրվա Խամենեյին, ով աջակցում էր Ահմադինեժադին, հենց թյուրքական ծագում ունի, հետևաբար Ահմադինեժադի ունեցած առավելությունը կարող է օրինաչափ դիտվել:

Ակնհայտ է, որ հեղինակություն ունեցող լրատվամիջոցները իրենց ներգործությունն ունեցան ընտրական իրադարձություններում իրարանցում առաջացնելու և մեղադրանքներ ներկայացնելու գործում: Միացյալ Նահանգների լրատվամիջոցները իրենց վերլուծությունները պատկերում էին բացասական տեսանկյունից: Միաժամանակ հարց է առաջանում, թե ինչու Միացյալ Նահանգներում այդքան հաճախակի չեն լուսաբանվում նմանատիպ իրադարձությունները կապված Սաուդյան Արաբիայի, Բահրեյնի կամ ԱՄՆ-ի դաշնակից այլ երկրների հետ: Կարող ենք հետևություն անել, որ ԱՄՆ-ը հետապնդում է կոնկրետ շահեր Իրանում, որոնց մասին հիմնականում չի լուսաբանվում, սակայն դրանք պարզ են դառնում պատմության մեջ ամրագրված նախադեպերի համատեքստից:

Վերջին ենթազույգը հակաիրանական քարոզչության մասին է: Այն նպատակաուղղված է միջազգային ասպարեզում, ինչպես նաև իրանցիների շարքերում կրոնապետական իշխանությունների հանդեպ բացասական մթնոլորտի ձևավորմանը: Ակտիվ քննարկվում են պետական կառույցների, միջուկային ծրագրերի, ազգային փոքրամասնությունների թեմաները:

Պետք է նշել, որ լրատվության ոլորտում ամերիկյան արհեստավարժ լրագրողները և վերլուծաբանները կիրառում են արևմտյան չափորոշիչներ, հանդես են գալիս պետական քաղաքականության շահերի տեսանկյունից: Նման պայմաններում մատուցվող լրահոսը հաճախ լսարանին չի ներկայացնում իրական պատկերը և ծառայում է Վաշինգտոնի նախաձեռնած քարոզչության իրականացմանը՝ ստեղծելով Իսլամական Հանրապետության մասին որոշակի կերպար:

Հաշվի առնելով Չեղափոխական գվարդիայի մեծ դերը երկրի քաղաքական, տնտեսական կյանքում՝ արևմտամետ լրատվամիջոցները բազմիցս պիտակավորել են այն որպես «ահաբեկչական» կառույց: Հետաքրքրական է այն փաստը, որ հենց ԱՄՆ-ի լրատվամիջոցներում այս կառույցը չի նշվում որպես այդպիսին, սակայն ԱՄՆ-ի լրատվամիջոցները լուսաբանում են այդ պիտակավորումը Իսրայելի անունից: Այսպես, «Լոս Անջելես Թայմսը» գրում է. «Իսրայելական լոբբիի կողմից Չեղափոխական գվարդիան ահաբեկչական կառույց անվանելը մի փորձ է, որը կմոտեցնի Իրանի հետ պատերազմին»<sup>19</sup>: Փաստորեն, Միացյալ Նահանգների լրատվամիջոցներն օգտագործում են «ուրիշի ձեռքով կրակից շագանակ հանելու» մարտավարությունը:

<sup>19</sup> Letters to The Editor: Another War On Horizon? // Los Angeles Times, Articles.latimes.com /2007/oct/25/opinion/le-thursday25.s1, 25.10.2007.

ԱՄՆ-ի ՉԼՄ-ներում հաճախակի քննարկվում են Իրանի ազգային փոքրամասնությունների, միջէթնիկական հիմնախնդիրները: Արբանյակային հեռարձակումների միջոցով քարոզչություն է տարվում իրանցի քրդերի, Ատրպատականի թյուրքախոս բնակչության և բելուջների շրջանում, որի նպատակը կենտրոնական իշխանություններից նրանց բաժանումն է:

ԱՄՆ-ի իշխանությունները քայլեր են ձեռնարկում ընդհանուր եզրեր գտնելու Իրանում ազգային (կրոնական) փոքրամասնությունների հետ՝ աջակցելով նրանց կա՛մ ներգաղթել ԱՄՆ, կա՛մ դեմ դուրս գալ գործող կարգերին: «Նրանք (ամերիկացիներ) մեր (ազգային փոքրամասնություններ) բոլոր անդամներին տալիս են «կանաչ քարթից» (Green Card): Նրանց միակ նպատակն այն գաղափարի քարոզչությունն է, թե Իրանը վատ է վերաբերվում իր փոքրամասնություններին»<sup>20</sup>: Պարզ է, որ «փախստականների» տեղեկությունները օգտագործվում են երկիրը վատ իմիջով ներկայացնելու համար:

Չակաիրանական քարոզչության մեջ ԱՄՆ-ի էլեկտրոնային լրատվամիջոցները կիրառում են նաև հետևյալ մարտավարությունը. սկզբում որոշ արևմտյան լրատվամիջոցներ ասեկոսներ են տարածում, պաշտոնյաների շուրթերով հայտարարություններով են հանդես գալիս ինչ-որ կարևոր խնդրի շուրջ: Չետո, ԱՄՆ-ի լրատվամիջոցներն անդրադառնում են այդ տեղեկատվությանը՝ ժխտելով կամ առաջ քաշելով սեփական տեսակետը: Այդպիսով, տվյալ թեման մտնում է սկզբնական շրջանառության մեջ: Այնուհետև, դաշնակիցներից մեկը կրկին քննարկման է դնում այդ հարցը, հետո մյուսներն են անդրադառնում, և այդ թեման սկսում է ավելի ինտենսիվորեն շրջանառվել: Վերջնական արդյունքում բոլորը սկսում են մասնակցել և հասնել նախատեսված եզրահանգմանը: Օրինակ, 2010թ. վերջին ամիսներին Իսրայելում ԱՄՆ-ի դեսպանը հայտարարում էր, որ աշխարհն ունի մինչև 18 ամիս, որպեսզի Իրանին ետ կանգնեցնի միջուկային զենք ստեղծելու մտքից: Այս հայտարարությունից հետո Բ. Օբաման ասաց, որ անընդունելի է այդ հարցի լուծման ռազմական ճանապարհը: Ամիսներ անց ԱՄՆ-ի դաշնակից Բահրեյնի թագավորի շուրթերով հայտարարվեց, որ Իրանի միջուկային ծրագիրը պետք է կասեցվի հիմա, քանի որ հետագայում ավելի դժվար կլինի նրան կանգնեցնել: Չետո արևմտամետ այլ ուժեր հանդես եկան: Վերջնական արդյունքում Իրանին կանխելու համար կիրառվեցին ավելի ծանր պատժամիջոցներ: Նման դիվանագիտական-տեղեկատվական քաղաքականությունն արդյունավետ քայլ է ներկայացնելու, իբրև թե ամբողջ աշխարհը ոտքի է կանգնել Իրանի միջուկային ծրագիրը տապալելու համար: Այս և նմանատիպ մարտավարական քայլերն ուղղված են միջազգային հանրության աչքերում Իրանի վարկանիշի ցածրացմանը, նրա միջազգային ինտեգրման խոչընդոտմանը:

---

<sup>20</sup> Erdbrink Th., Brulliard, K., US Zeal for Iran's Non-Muslims faulted // Washington Post, <http://www.washingtonpost.com/wp-dyn/content/article/2008/02/29/AR2008022903488.html>, 01. 03. 2008.



Հակաիրանական քարոզչության թեմաներից ակտիվ քննարկվում են նաև իրանական հասարակության մեջ կնոջ ճնշված լինելու տեսակետը, անհնազանդ իսլամի հետևորդների և երիտասարդների թեմաները: Տեղեկատվական հոսքերի մեծ մասը ներկայացվում է բացասական երանգով՝ ահաբեկչական գործողություններ, սպանություններ, բռնություններ: Վատ լուրերը գերակշռում են այս տարածաշրջանից ստացվող լրահոսում: Հատկանշական է, որ հակամարտությունների, լարվածության, անկայունության բացասական հենքի վրա լուսաբանվում են դրական կողմեր և, այն է՝ արևելյան մշակույթի, բնության գրավչությունը: «Նյու Յորք Թայմսը», անդրադառնալով Իրանի հասարակական – քաղաքական կյանքին, գովազդում է Իրանի մշակույթը, իրանական ճոխ կյանքը, ընդ որում այդ գովազդը դրվում է 1-ին էջի տեսանելի վայրում:

Այսպիսով, Իրանի հասարակական-քաղաքական կյանքի լուսաբանումը կարող է չհամապատասխանել իրականությանը կամ լինել սուբյեկտիվ, սակայն ամերիկյան լրատվամիջոցների կողմից նման տեղեկատվությունը կարող է պարբերաբար քննարկվել, տարածվել և շրջանառության մեջ դրվել՝ ստեղծելով համապատասխան կարծրատիպեր և առասպելներ: Փաստենք, որ ԱՄՆ-ի կողմից ձեռնարկած հակաիրանական քարոզչությունը ստանում է լայն արձագանք: “Pew Research Center”-ի 2006-2011թթ. կատարած հարցումների արդյունքները ցույց են տալիս տարբեր երկրների ունեցած դրական կարծիքը Իրանի մասին<sup>21</sup> (աղյուսակ 1):

(աղյուսակ 1)

Երկիրը	2006թ. քանի %-ն է դրական արտահայտվել	2011թ. քանի %-ն է դրական արտահայտվել
Ինդոնեզիա	77 %	58%
Պակիստան	72 %	71%
Եգիպտոս	59 %	22%
Թուրքիա	53 %	24%
Հորդանան	49 %	23%
Ռուսաստան	43 %	42%
Մեծ Բրիտանիա	34 %	23%
Հնդկաստան	31 %	17%
Չինաստան	26 %	29%
ԱՄՆ	25 %	19%
Ճապոնիա	23 %	20%
Ֆրանսիա	22 %	21%
Իսպանիա	22 %	11%
Գերմանիա	12 %	9%

<sup>21</sup> Տե՛ս Opinion of Iran // Pew Research Center, Pew Global Attitude Project, <http://pewglobal.org/database/?indicator=25>.

## ԵԶՐԱՎԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով Իրանի Իսլամական Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի լուսաբանման առանձնահատկությունները Միացյալ Նահանգների էլեկտրոնային լրատվամիջոցներում՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

- ԱՄՆ-ի էլեկտրոնային ՁԼՄ-ներում (հիմնականում «Նյու Յորք Թայմսի», «Լոս Անջելես Թայմսի», «Վաշինգտոն Փոստի», «Սի-Էն-Էնի» կայք-էջեր) մեծ ուշադրության են արժանանում Իրանի հասարակական, ներքին և արտաքին քաղաքականության վերաբերյալ թեմաները, որոնք ներկայացվում են հիմնականում բացասական երանգներով: ՁԼՄ-ների հրապարակումներում գրեթե աննկատ են դրական երևույթները:

- Միացյալ Նահանգների լրատվամիջոցներն իրենց նյութերում հաճախ ներկայացնում են ընդդիմադիր, պաշտոնանկ արված կամ երկրից վտարված մարդկանց տեղեկություններ, կարծիքներ: Սա մի փորձ է միջազգային հանրությանը ցույց տալու իրանցիների դժգոհությունները իշխանություններից: Նման հենքի վրա նշվում է, որ իրանցիները օգնության կարիք ունեն:

- ԱՄՆ-ի հայտնի ՁԼՄ-ները որպես աղբյուր հաճախ օգտագործում են հետախուզական տվյալներ, վերլուծություններ, որոնք, որպես կանոն, չեն մատնանշում կամ հազվադեպ են մատնանշում հեղինակներին կամ աղբյուրներին, հետևաբար նման տեղեկությունների հավաստիությունը կարող է վիճարկելի լինել:

- «Հայեցակարգային լրագրության» սկզբունքներն օգտագործելով՝ ԱՄՆ-ի նշված լրատվամիջոցներում շեշտը դրվում է լրագրողի մասնագիտական հմտությունների, ոչ թե փաստերի վրա: Այս առումով պատահական չէ վերլուծական ժանրերի ակտիվ կիրառումը:

- Սոցցանցերը մեծ նշանակություն ձեռք բերեցին: Հատկապես արտակարգ իրավիճակներում դրանց դերը այնքանով էր էական, որ ամերիկյան հայտնի լրատվամիջոցներն օգտվեցին սոցցանցերի թարմ տեղեկություններից՝ չունենալով սեփականը: Համացանցային լրատվամիջոցներում կարևորվեց մուլտիմեդիա նյութերի կիրառումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեսաիլովակները, ձայնային և գունային ազդեցության միջոցները ավելի մեծ տպավորություն են գործում մարդկանց, նրանց ընկալումների վրա, քան սովորական տեքստային նյութերը:

- Մարտավարության առումով ԱՄՆ-ի էլեկտրոնային ՁԼՄ-ներում կարող ենք հանդիպել այնպիսի միջոցների կիրառման, ինչպիսիք են դաշնակից երկրների հեղինակավոր դեմքերի, ՁԼՄ-ների միջոցով մեծ աղմուկ բարձրացնելը, ընդհանուրի մեջ մասնավոր դեպքերի լուսաբանումը և այլն: ԱՄՆ-ում հաշվի են առնում այն սկզբունքը, որ շրջանառվող տեղեկությունները (թեկուզ արհեստա-

ծին) կարող են ընկալվել որպես ճշմարտություն՝ դրանց հաճախակի կրկնության միջոցով:

- ԱՄՆ-ի լրատվամիջոցները կիրառում են լուսաբանման արևմտյան չափորոշիչներ, ինչը չի կարող օբյեկտիվորեն պատկերել իրականությունը ոչ արևմտյան քաղաքակրթության համար, հետևաբար ներկայացված տեղեկատվությունը կարող է աղճատված լինել:

- Հաճախ անդրադարձ է կատարվում իրանցի երիտասարդության թեմաներին: Հաշվի առնելով, որ Իրանում երիտասարդներն ունեն որոշ դժգոհություններ, բնակչության մեծ մասը 28-ից ցածր տարիք ունի և համեմատաբար ավելի ակտիվ է, ԱՄՆ-ի լրատվամիջոցները կարևորում են երիտասարդների շրջանում հակակառավարական տրամադրությունների ձևավորումը: Լայն քննարկման առարկա է անազատությունների խնդիրը:

- ԱՄՆ-ի ՉԼՍ-ների կողմից Իրանը որպես «չարիքի առանցք», «ահաբեկչական պետություն», «ԱՄՆ-ի թիվ 1 թշնամի» ներկայացնելը, նպատակ ունի աղավաղել Իրանի միջազգային վարկանիշը, նրա հանդեպ սերմանել անվստահություն և խոչընդոտել նրա միջազգային ինտեգրմանը:

- Հաճախակի լուսաբանելով ազգային (կրոնական) փոքրամասնությունների, իշխանություն-ընդդիմություն տարածայնությունների և այլ խնդիրներ՝ վերոնշյալ լրատվամիջոցները միշտ փորձում են «կենդանի» պահել լարվածության մթնոլորտը:

- Ամերիկյան լրատվամիջոցները Իրանի իշխանություններին քննադատելու հետ մեկտեղ վառ գույներով են պատկերվում իրանական մշակույթը, ճոխ կյանքը:

- Հաշվի առնելով նախկին փորձը, երբ արևմտյան վերլուծությունները «հիմնավորեցին» իրաքյան «քիմիական սպառնալիքները», և հետագայում պարզ դարձավ Վաշինգտոնի նկրտումները՝ կարող ենք փաստել, որ ներկայումս իրանական միջուկային «սպառնալիքների» թմբկահարումը լրատվամիջոցներով միջազգային լսարանում հետապնդում է կոնկրետ նպատակներ, այն է՝ կրոնապետական վարչակարգի քայքայում և իրանական նավթի և գազի պաշարների նկատմամբ վերահսկողության հաստատում, որի մասին լռում են ԱՄՆ-ի լրատվամիջոցները:

- Իրանին վերագրվող բացասական տրամադրություններին երբեմն անդրադառնում են նաև ՀՀ-ի լրատվամիջոցները, քանի որ հաճախ են հղում կատարում արևմտյան աղբյուրներին: ԱՄՆ-ի կողմից Իրանի բացասական իմիջի ներկայացումն ունի հստակ նպատակներ, սակայն նման մարտավարության որդեգրումը մեր հանրապետության շահերի արտահայտման տեսանկյունից կարող է լինել ոչ նպատակահարմար: Ուստի, մեր լրատվական դաշտում արևմտյան լրատվամիջոցներին զուգահեռ տեղին կլինի ուշադրություն դարձնել նաև իրանական աղբյուրներին, որը կնպաստի մեր հասարակության մեջ բազմակողմանի տեղեկատվության և օբյեկտիվ կարծիքի ձևավորմանը:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿԿԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Նոր մեդիայի առանձնահատկությունները տեղեկատվական ոլորտում. Իրանի օրինակը, «Բանբեր Երևանի համալսարանի» (հասարակական գիտություններ), Եր., ԵՊՀ հրատ., 2011, 133. 2, էջ 66-70:
2. Իրանաամերիկյան տեղեկատվական հակամարտությունը աշխարհաքաղաքական համատեքստում, «ՀՌՀ չորրորդ տարեկան գիտաժողով, Գիտական հոդվածների ժողովածու», մաս 2, Եր., ՀՌՀ հրատ., 2010, էջ 464-472:
3. ԶԼՄ-ների դերը պետության իմիջի ձևավորման գործում, «Բանբեր Երևանի համալսարանի» (հասարակական գիտություններ), Եր., ԵՊՀ հրատ., 2011, 135. 2, էջ 66-71:
4. Իրանի հասարակական-քաղաքական կյանքի լուսաբանումը արևմտյան մամուլում իսլամական հեղափոխության տարիներին, «Իրանի իսլամական հեղափոխությունը համեմատական կոնտեքստում» միջազգային գիտաժողովի հոդվածների և զեկույցների ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 70-75:

## Назарян Айка Завенович

### «Особенности освещения общественно-политической жизни Исламской Республики Иран в электронных СМИ США».

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.06 «Журналистика».

Защита состоится 06 июня 2012г. на заседании специализированного совета ВАК 012, действующего при ЕГУ, по адресу г. Ереван, ул. Хачатура Абовяна 52/А, ЕГУ, корпус филологического факультета, аудитория 202.

#### Резюме

Диссертация посвящена особенностям освещения общественно-политической жизни Исламской Республики Иран со стороны электронных СМИ США. Особое внимание было уделено материалам таких СМИ, как «Нью-Йорк Таймс» ([www.nytimes.com](http://www.nytimes.com)), «Лос-Анджелес Таймс» ([www.latimes.com](http://www.latimes.com)), «Вашингтон Пост» ([www.washingtonpost.com](http://www.washingtonpost.com)), «Си-Эн-Эн» ([www.cnn.com](http://www.cnn.com)), а также осуществлен анализ материалов иранских новостных веб-сайтов.

Нужно отметить, что проблемы, связанные с Ираном на сегодняшний день являются одними из самых обсуждаемых в мире. Данная тема является одной из наиболее актуальных проблем, которая находится под пристальным вниманием журналистов, политологов и специалистов различных областей. Нужно отметить, эта сфера выделяется тем, что в ней преобладают зачастую противоречащие друг друга точки зрения, и для ее подробного изучения был сделан многосторонний анализ информации. В диссертации содержится богатая информация о методах, тактиках и особенностях вышеупомянутых средств массовой информации.

**Во введении** была представлена общая характеристика темы, обоснована ее актуальность, научная новизна. Были показаны цели и задач исследования, а также методологическая основа.

**Глава первая**, «Публикации СМИ и формирование общественного мнения», состоит из двух подглав. В первой подглаве говорится о роли и значении средств массовой информации в формировании имиджа государств. В частности выделяется влияние американских СМИ на формирование имиджа Исламской Республики Иран. Во второй главе говорится о методах воздействия, к которым прибегают СМИ для формирования определенного общественного мнения. Такие методы как пропаганда и дезинформация стали мощнейшим оружием в руках великих держав. Как показывает история, широкомасштабная информационная деятельность может полностью преобразовать страны и привести к геополитическим изменениям.

**Вторая глава** посвящена изучению применения возможностей интернета в информационной сфере, и для этого были взяты примеры США и Ирана. Были подчеркнуты роли интернета, социальных сетей, блогов и выделены их функции. В частности, ярким примером этому служат события президентских выборов в Иране. В условиях строго ограничения доступной информации в стране, беспорядки на улицах Тегерана в 2009 году стали результатом прямого влияния новых медиа.

**Третья глава**, «Освещение общественно-политической жизни Ирана в СМИ США», состоит из 4 подглав. В первой подглаве говорится об исламской революции в Иране. Обсуждение данной темы важно постольку, поскольку именно в ней коренятся основы напряженности, существующей на сегодняшний день между странами.

Во второй подглаве говорится об ирано-американской информационной войне. Почти каждый день мы становимся свидетелями существующей между сторонами конфронтации, проявляющейся в самых различных формах. Были выделены несколько сфер конфронтации в данной информационной войне: внутренняя и внешняя политика ИРИ, освещение американскими электронными СМИ проблем в общественной жизни ИРИ, ядерная программа Ирана, а также представлены ответы на эти действия со стороны религиозных и политических деятелей ИРИ. Следует отметить, что в американских СМИ незначительное число публикаций, относящихся к таким темам как культура, наука и образование Ирана и их достижения.

Освещение американскими СМИ общественно-политической жизни Ирана значительно возросло в июне 2009 года во время президентских выборов. Данные СМИ имели самое непосредственное влияние на подъем народного движения, активно освещая каждый предпринимаемый шаг со стороны властей Ирана. Именно поэтому складывалось впечатление, что Иран находится на грани гражданской войны и зарождающейся революции.

Последняя подглава посвящена антииранской пропаганде. Она направлена на формирование негативной атмосферы вокруг иранских государственных деятелей у международного сообщества и внутри самого иранского общества. Именно поэтому в американских масс-медиа активно обсуждаются такие проблемы Ирана как ее государственное строение, ядерная программа, проблемы этнических меньшинств, подавленное положение женщины в иранском обществе, проблемы агрессивных последователей Ислама и многие другие.

В заключительном разделе диссертации делаются **выводы** и подводятся основные итоги работы.

В конце диссертации прилагается список **использованной литературы**.

**Nazaryan Hayk Zaven**

**“The Coverage Specificity of Public and Political Life of the Islamic Republic of Iran  
in US Electronic Mass Media”**

Philology PhD thesis, speciality 10.01.06 “Journalism”

Defence day: June 06, 2012, 14.00 pm at the session of Specialized Council (High  
Attestation Commission) 012 under Yerevan State University.

Address: Yerevan, 52/A. Abovyan str., YSU, Faculty of Philology, Room 202

**R E S U M E**

The present thesis is devoted to the coverage of the public and political life of the Islamic Republic of Iran by the US electronic mass media, and to the presentation of the coverage specificities. We have paid special attention to such mass media materials as “New York Times” ([www.nytimes.com](http://www.nytimes.com)), “Los-Angeles Times” ([www.latimes.com](http://www.latimes.com)), “Washington Post” ([www.washingtonpost.com](http://www.washingtonpost.com)), “CNN” ([www.cnn.com](http://www.cnn.com)) and others, as well as to the materials of Iranian web sites.

Iranian problems are among the ones being discussed widely in recent years. This is a contemporary topic as it has always been in the centre of journalists’, politicians’ and various specialists’ attention. This field is striking for its controversial viewpoints, so we have made a multilateral analysis for its study. The thesis includes rich data on the methods, tactics and characteristics applied by the mass media mentioned above. We have paid special attention to the electronic Mass Media.

**The Introduction** presents the major issues of the topic confirming the fact of its being contemporary and being a scientific innovation. So, we have mentioned the problems, purposes and the methodological basis of the research.

**Chapter 1** – “Mass Media Publications and Shaping of Public Opinion” consists of 2 subchapters. The first one concerns the mass media role and significance in the process of a state image formation. We point out how the US electronic mass media try to present the image of Iran. The second subchapter refers to those means of mass media influence which shape a public opinion; propaganda and misinformation have become powerful weapons for great states. History shows that widely spread information operations can reform states and can lead to geopolitical changes. The sample of Iran was a specific one, that was discussed in our thesis.

**Chapter 2** highlights the Internet possibilities application in the information field. The examples of the United States and Iran are brought forward. Here we have emphasized the roles of the Internet, social networks, blogs and their functions. Particularly, in summer

2009, under the conditions of information availability restrictions in Iran, the turmoil in Tehran's streets was mostly the result of the use of new media possibilities. But the Government of Iran took adequate steps.

**Chapter 3** – “Coverage of the Public and Political Life of Iran by the US Mass Media” is comprised of 4 subchapters. In the first one we speak about the Islamic revolution of Iran. The presentation of this subtitle is of special importance as it highlights the present-day bases of tension between the sides. In these years the revolution and its results were the most actual theme in the Western media coverage. This revolution was marked as a great event in the last quarter of 20<sup>th</sup> century in the Iranian, as well as in the Western press.

The second subchapter refers to the Iranian-American information warfare. Almost every day we witness various demonstrations of the conflict between the sides. We have separated the Iranian-American information warfare fields as follows – Foreign and Home Policy of Iran, the enlightenment of public life problems by the US mass media, the response by the religious and state authorities, information warfare against Iran's nuclear, military and communicative fields and others. It is worth mentioning that there are few publications on the topics about Iran's cultural, scientific, educational fields and their achievements.

The coverage of the public and political life of Iran by the US mass media increased in June 2009, during the presidential elections days. The US mass media had their direct influence upon giving rise to movements by the active coverage of each taken step. There was an impression that Iran was about to start a civil war, and that there could be a revolution.

The last subchapter is devoted to anti-Iranian propaganda. It is aimed at the creation of a negative atmosphere towards theocratic authorities in the information field and among the Iranian people. The US electronic mass media are making active discussions on the topics concerning the Iranian state organisations, nuclear programmes, interethnic problems, on pressure towards women in the Iranian society, on the problems referring the aggressive Muslim followers.

In the final part of the thesis we have drawn conclusions and made a summary of the research work.

The list of used literature is attached in the final part of the thesis.